ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ
ՄԱՆԿԱՏՈՒՆ»
ՊՈԱԿ

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF LABOUR AND
SOCIAL ISSUES
"SPECIALIZED
CHILDREN'S
HOME OF KHARBERD"
SNCO

«15» սեպտեմբերի 2022թ. Ե-01

ՈՐՈՇՈՒՄ

/«Խարբերդի մասնագիտացված մանկատուն »ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարողի/1.02.2022թվականին ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության/ի դեմս՝Ս.Մուրադյանի/ և «Լեյկո»ՍՊԸ-ի միջև կնքվել է «Խարբերդի մասնագիտացված մանկատուն »ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական,սանհիգիենիկ և մաքրիչ նյութերի մատակարարման ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/7-3-Խ ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին.

ՊԱՐԶԵՑԻ

1.02.2022թվականին ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության/ի դեմս՝Ս.Մուրադյանի/ և «Լեյկո»ՍՊԸ-ի միջև կնքվել է «Խարբերդի մասնագիտացված մանկատուն »ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական,սանհիգիենիկ և մաքրիչ նյութերի մատակարարման պայմանագիր՝ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/7-3-Խ ծածկագրով:

Համաձայն վերը նշված պայմանագրի 1.1 կետի պահանջների՝ սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով «Խարբերդի մասնագիտացված մանկատոն» ՊՈԱԿ-ին «Լեյկո»ՍՊԸ-ն պետք է մատակարարի պայմանագրի հավելվածով և տեխնիկական բնութագիր-գնման–ժամանակացույցով նախատեսված ապրանքը/հեղուկ օճառ՝ նախատեսված ձեռքի լվացվելու համար/, իսկ ««Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը պարտավորվում է ընդունել ապրանքը ու վճարել դրա համար:

Նույն պայամանագրի արդեն 6.3 կետի պահանջնի համաձայն՝տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում վաճառողից գանձվում է տուգանք՝պայմանագրի 0.5 տոկոսի չափով:Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու,սակայն պատվիրատուի կողմից այն չընդունվելու դեպքում:

Իսկ պայմանագրի 6.4 կետի դրույթների համաձայն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

«Խարբերդի մասնագիտացված մանկատուն »ՊՈԱԿ –ի պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմվել են արձանագրություններ, թե ժամկետի խախտումների վերաբերյալ և թե մատակարարված ապրանքի թերությունների վերաբերյալ, որից հետո «Լեյկո»ՍՊԸ-ին ուղարկվել են գրություններ՝ ոչ պատշաճ ապրանքը, պատշաճ ապրանքով փոխարինելու վերաբերյալ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուղարկված գրությունների համաձայն չի մատակարարվել պայմանագրի հավելվածով և տեխնիկական բնութագիր-գնման–ժամանակացույցով նախատեսված ապրանքը, ուստի ղեկավարվելով վերոգրյալից և պայմանագրի 2.1.7 կետի պահանջներից.

ՈՐՈՇԵՑԻ

1.02.2022թվականին ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության/ի դեմս՝Ս.Մուրադյանի/ և «Լեյկո»ՍՊԸ-ի/ի դեմս՝գլխավոր տնօրեն Գ.Ալեքսանյանի/ միջև կնքված «Խարբերդի մասնագիտացված մանկատուն»ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական,սանիհիգիենիկ և մաքրիչ նյութերի մատակարարման ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/7-3-Խ ծածկագրով պայմանագիրը:

2/Օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել «Լեյկո»ՍՊԸ-ին պայմանագրի լուծման վերաբերյալ :

3/Կատարել մատակարարման պայմանագրով սահմանված բոլոր անհրաժեշտ գործողությունները:

Տնօրենի պարտականությունները կատարող՝ Հ. Բալասանյան

✉ Արարատի մարզ, գ. Նոր Խարբերդ

☎ 0236 6 00 25 (Մասիս) (Նոր Խարբերդ)

091 42 79 60

✉ Ararat Marz, Nor Kharberd

☎ 0236 6 00 25 (Masis) (Nor Kharberd)

091 42 79 60